

## COVID-19 – Աշխատանքի առողջության և անվտանգության տեղեկատվություն աշխատավայրերի համար

Այս տեղեկագիրը ձեզ կօգնի ձեր աշխատավայրը դարձնել COVID-19-ից անվտանգ: Այլ տեղեկատվություն COVID-19-ի վերաբերյալ ձեր լեզվով՝ [COVID-19 Information in your language](#) նույնպես մատչելի է:

Աշխատանքի առողջության և անվտանգության օրենքները պահանջում են, որ դուք հոգ տանեք ձեր աշխատողների և մյուսների առողջության, անվտանգության և բարեկեցության համար ձեր աշխատավայրում՝ ներառյալ դուք, ձեր անձնակազմը, կապալառուները, հաճախորդներն ու այցելուները: Դուք պետք է հնարավորինս վերացնեք կամ նվազագույնի հասցնեք առողջությանը և անվտանգությանը սպառնացող վտանգները: Դա օրենքն է:

### Ծրագրեր և հաղորդակցվեք

Դուք պետք է կառավարեք COVID-19-ին ենթարկվելու վտանգը ձեր աշխատավայրում: Աշխատողներին անվտանգ պահելու համար, ձեզ անհրաժեշտ է ծրագիր ձեր աշխատավայրի համար, որը ներառում է ֆիզիկական հեռավորություն, հիգիենա և մաքրում:

Համոզվելու համար, որ ձեր ծրագիրը արդյունավետ է, դուք նաև պետք է.

- Տեղեկացված լինեք վստահելի աղբյուրներից ստացված վերջին տեղեկատվությամբ: Հանրային առողջապահության հրահանգները՝ [Public health directions](#) ձեր նահանգում կամ տարածքում ներառում են կանոններ սահմանափակումների և պահանջների վերաբերյալ ձեր տեսակի բիզնեսի համար:
- Նախապատրաստեք, թե ինչ կանեք, եթե COVID հիվանդությունը լինի ձեր աշխատավայրում:
- Հաշվի առեք ցանկացած նոր վտանգներ, որոնք բխել են ձեր աշխատանքի ձևի փոփոխությունների հետևանքով (օրինակ՝ հաճախորդների բռնի վարքագիծ կամ աշխատողների մեկուսացում):
- Զրուցեք ձեր աշխատողների հետ և հաշվի առեք նրանց մտահոգությունները:
- Վերապատրաստեք անձնակազմը և համոզվեք, որ բոլորը գիտեն ինչ անել:
- Փակցրեք ցուցանակներ և պաստառներ՝ [signs and posters](#), որպեսզի հիշեցնեք մարդկանց COVID-19-ի վտանգների մասին և, թե ինչպես դադարեցնել տարածումը:

### Դադարեցրեք COVID-19-ի տարածումը

- Դուք և ձեր աշխատողները պետք է մնաք տանը, եթե հիվանդ եք (ջերմ, հագ, կոկորդի ցավ և դժվարացած շնչառություն):
- Ապահովեք, որ մարդիկ պահպանեն միմյանցից առնվազն 1.5 մետր ֆիզիկական հեռավորություն:
- Խրախուսեք աշխատողներին հաճախակի լվանալ ձեռքերը առնվազն 20 վայրկյան օճառով և ջրով կամ օգտագործեն ալկոհոլային հիմքով ձեռքի ախտահանիչներ:
- Խրախուսեք աշխատողներին պահպանել պատշաճ հիգիենա և հազալ կամ փռշտալ իրենց թևի մեջ:
- Ապահովեք, որպեսզի ձեր աշխատավայրը պարբերաբար մաքրվի և ախտահանվի: Մաքրեք հաճախակի դիպչող մակերեսները ավելի հաճախ:
- Ձեռք բերեք անձնական պաշտպանիչ սարքավորումներ (օրինակ՝ ձեռնոցներ և դիմակներ) աշխատողների համար, եթե դրանց կարիքն ունեն: Սովորեցրեք նրանց, թե ինչպես օգտագործել դրանք:

### Վերանայում

- Պարբերաբար վերանայեք ձեր ծրագիրը, որպեսզի համոզվեք, որ այն արդյունավետ է և աշխատողներին կպահի անվտանգ COVID-19-ից:
- Եթե որևէ նոր վտանգներ են առաջացել, հաշվի առեք, արդյոք անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ միջոցներ:

COVID-19-ի և աշխատանքի առողջության և անվտանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար՝ այցելեք Անվտանգ Աշխատանք Ավստրալիա կայքը՝ [Safe Work Australia website](#).

Աշխատանքի առողջության և անվտանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկագրերի համար՝ այցելեք COVID-19-ի վերաբերյալ տեղեկատվություն ձեր լեզվով կայքը՝ [COVID-19 Information in your language website](#).

Առողջության մասին տեղեկատվության համար, այցելեք՝ [health.gov.au](#).

Ձեր աշխատավայրին հատուկ տեղեկատվության համար, դիմեք համապատասխան Աշխատանքի առողջության և անվտանգության կարգավորիչին ձեր նահանգում կամ տարածքում՝ [WHS regulator in your state or territory](#).